



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականի մայիսին (վերլուծություն)

2017 թվականի մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 15708 գործարք, որոնց քանակը 2017 թվականի ապրիլ ամսվա համեմատ աճել է 39.1 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 7.2 %-ով:

2017 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4451 օտարման գործարքի 73.0 %-ը կազմել է առուվաճառքը, 26.7 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 43.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.7 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականի մայիսին, 2017 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքը աճել է 38.5 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 23.8 %-ով:

2017 թվականի մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 59.9 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2017 թվականի մայիսին, 2017 թվականի ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 47.2 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 46.5 %-ով:

2017 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մայիս 2016 թ.	մայիս 2017 թ.	ապրիլ 2017 թ.
<b>Կենտրոն</b>	428000	450000	427000
<b>Արաբկիր</b>	357000	340000	330000
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	283100	268000	270000
<b>Նոր Նորք</b>	254150	230000	240000
<b>Ավան</b>	261500	247600	255000
<b>Էրեբունի</b>	252300	237000	240000
<b>Շենգավիթ</b>	257600	240000	240100
<b>Դավթաշեն</b>	276650	250000	250200
<b>Աջափնյակ</b>	250900	226250	242000
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	244000	230000	230000
<b>Նուբարաշեն</b>	157250	156000	156000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մայիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի ապրիլի համեմատ՝ նվազել է 0.2%-ով:

2017 թվականի մայիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 328 բնակարան, որոնց քանակը 2017 թվականի ապրիլի համեմատ աճել է 68.2 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 6.2 %-ով:

2017 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մայիս 2016 թ.	մայիս 2017 թ.	ապրիլ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	116050	105000	110000
	Ապարան	58400	59000	58800
	Թալին	66750	62000	63200
Արարատ	Արտաշատ	98750	91000	94000
	Մասիս	115800	98000	110000
	Վեդի	101750	90000	90000
Արարատ	Արարատ	77450	77850	77850
	Վաղարշապատ	154200	125000	150000
	Արմավիր	121250	100000	118050
Արմավիր	Մեծամոր	87600	80000	84000
	Սևան	99400	80000	85300
	Գավառ	60550	53000	55000
Գեղարքունիք	Մարտունի	107700	109000	101100
	Վարդենիս	45250	46100	45400
	Ճամբարակ	28750	28800	28800
Լոռի	Վանաձոր	88600	86000	86000
	Ստեփանավան	74750	70000	70000
	Սպիտակ	99850	93000	95000
Լոռի	Ալավերդի	55750	49000	50000
	Տաշիր	47400	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
Լոռի	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20500	20500	20500
	Աբովյան	155150	147000	150000
Կոտայք	Նոր Հաճն	128550	120000	120000
	Բյուրեղավան	108250	91000	100000
	Եղվարդ	109850	102000	102000
Կոտայք	Հրազդան	63900	58000	58000
	Ծաղկաձոր	292400	288000	292400
	Չարենցավան	85500	73000	80000
Շիրակ	Գյումրի	109450	91000	101400
	Արթիկ	67250	67600	67600
	Մարալիկ	41050	41150	41150
Սյունիք	Գորիս	123600	125500	124200
	Կապան	94900	96000	96000
	Սիսիան	92200	90000	90000
Սյունիք	Մեղրի	82900	86000	84700
	Քաջարան	94850	98000	96300
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	92000	93000
	Եղեգնաձոր	126150	120000	124000
	Ջերմուկ	113200	99000	110000
Տավուշ	Դիլիջան	115500	100000	111000
	Իջևան	118550	110000	115000
	Բերդ	60450	60600	60600
Տավուշ	Նոյեմբերյան	50350	50600	50600
	Այրում	31850	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2017 թվականի ապրիլի համեմատ համեմատ՝ նվազել է 3.3%-ով:

2017 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 381 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 121 գործարք, մարզերում՝ 260 գործարք: 2017 թվականի մայիսին, 2017 թվականի ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 60.1 %-ով, ընդ որում, Երևանում՝ 40.7 %-ով, իսկ մարզերում՝ 71.1 %-ով: 2017 թվականի մայիսին 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ 18.6 %-ով, իսկ մարզերում՝ 15.0 %-ով:

2017 թվականի մայիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	մայիս 2016 թ.	մայիս 2017 թ.	ապրիլ 2017 թ.
Կենտրոն	476100	476000	476000
Արաբկիր	383000	380000	380000
Քանաքեռ-Զեյթուն	295000	283100	285000
Նորք-Մարաշ	319200	300000	300000
Ավան	270500	262000	263000
Էրեբունի	239750	234130	235100
Շենգավիթ	255000	230000	230000
Դավթաշեն	276000	268050	270000
Աջափնյակ	250100	240000	245000
Մալաթիա-Սեբաստիա	238100	234000	236000
Նուբարաշեն	150800	150000	150000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մայիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի ապրիլի համեմատ՝ նվազել է 0.4%-ով:

2017 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		մայիս 2016 թ.	մայիս 2017 թ.	ապրիլ 2017 թ.
Արագածոտն	Աշտարակ	136250	132000	134000
	Ապարան	60050	50000	60000
	Թալին	69250	66000	67800
	Արտաշատ	100000	97000	98100

Արարատ	Մասիս	115100	110100	112100
	Վեդի	102300	90600	90700
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153150	150050	151150
	Արմավիր	107000	102000	103950
Գեղարքունիք	Սևան	94950	92950	92950
	Գավառ	57100	54100	54100
	Մարտունի	96100	95000	95200
	Վարդենիս	41150	41150	41150
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100900	100000	100000
	Ստեփանավան	91200	85000	88000
	Սպիտակ	114000	110000	110100
	Ալավերդի	50200	50500	50300
	Տաշիր	51900	45000	45950
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
	Ախթալա	30000	30000	30000
Կոտայք	Աբովյան	157350	155200	157350
	Նոր Հաճն	129800	126000	126000
	Բյուրեղական	120500	110000	111000
	Եղվարդ	116100	109000	111000
	Հրազդան	82600	72000	73000
	Ծաղկաձոր	305000	300000	301000
	Չարենցավան	83000	80000	80000
Շիրակ	Գյումրի	119250	118200	118200
	Արթիկ	63450	60400	60400
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	128000	130050
	Կապան	100700	100600	100750
	Սիսիան	96500	95000	96600
	Մեղրի	84650	84000	84000
	Դաստակերտ	11610	11810	11810
Վայոց ձոր	Վայք	90150	88100	88300
	Եղեգնաձոր	116750	114000	115000
	Ջերմուկ	131300	129000	130000
Տավուշ	Դիլիջան	115550	111100	113500
	Իջևան	123200	120200	121200
	Բերդ	60100	57000	57100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2017 թվականի ապրիլի համեմատ՝ նվազել է 1.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի մայիսին հանրապետությունում օտարվել է 1371 միավոր (1284.34 հա) հող, որից Երևանում՝ 127 միավոր (9.37 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 778 միավոր (1234.31 հա), որից Երևանում՝ 4 միավոր (1.01 հա),

- բնակելի կառուցապատման հող՝ 428 միավոր (34.19 հա), որից Երևանում՝ 80 միավոր (2.97 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 133 միավոր (9.63 հա), որից Երևանում՝ 41 միավոր (5.37 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 21 միավոր (4.37 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.02 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 6 միավոր (1.34 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 4 միավոր (0.17 հա),
- ջրային հող՝ 1 միավոր (0.33 հա) մակերեսով:

2017 թվականի մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1121 միավորի (1173.64 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 114 միավոր (8.99 հա), նվիրատվության գործարք՝ 241 միավորի (104.49 հա), որից Երևանում՝ 9 միավոր (0.32 հա) և փոխանակության գործարք՝ 9 միավորի (6.21 հա), որից Երևանում՝ 4 միավոր (0.06 հա):

Հանրապետությունում 2017 թվականի մայիսին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակն աճել է 13.5 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակն աճել է 8.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 27.2 %-ով արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.4 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Վայոց ձորի մարզում՝ 400.32 հա, որից 399.91 հա գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 16.9 %-ը կամ 189 միավորը (318.94 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 25 միավոր (1.36 հա), իսկ 81.3 %-ը կամ 911 միավորը (854.37 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 87 միավոր (7.61 հա): 2017 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 21 գործարք (0.33 հա):

Ստորև ներկայացված է 2017 թվականի մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	
Երևան	0	0.00	1	0.004	10	0.19	14	1.16	3	0.95	1	0.02	60	2.50	23	4.14
Արագածոտն	8	16.59	0	0.00	1	0.01	0	0.00	61	80.86	0	0.00	19	2.93	1	0.01

Արարատ	11	11.54	1	0.02	3	0.42	1	0.004	120	43.82	0	0.00	50	4.67	7	0.09
Արմավիր	4	1.92	1	0.04	0	0.00	2	0.05	81	370.11	0	0.00	45	4.29	2	0.01
Գեղարքունիք	2	0.82	2	0.51	2	0.25	8	0.86	14	10.42	2	0.03	19	1.86	4	0.06
Լոռի	1	0.05	2	1.84	4	0.05	5	0.64	92	53.89	2	0.88	6	0.43	8	0.24
Կոտայք	8	3.77	1	0.05	21	0.16	3	0.09	100	65.49	1	0.01	68	6.52	7	0.21
Շիրակ	0	0.00	3	0.25	2	0.01	5	0.05	35	45.80	0	0.00	5	0.30	3	0.05
Սյունիք	3	2.70	0	0.00	4	0.15	4	0.11	21	16.43	0	0.00	10	0.84	2	0.07
Վայոց ձոր	25	268.05	0	0.00	1	0.07	1	0.01	17	131.86	0	0.00	1	0.04	2	0.18
Տավուշ	16	5.90	2	0.16	2	0.04	2	0.01	8	2.26	0	0.00	5	0.43	3	0.45
Ընդամենը	78	311.34	13	2.87	50	1.35	45	2.98	552	821.89	6	0.94	288	24.81	62	5.51

Ստորև ներկայացված է 2017 թվականի մայիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	18	0.12	0	0.00	8	0.07	10	0.05	15	0.77	0	0.00	0	0.00	3	0.25	12	0.52
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	18	114.04	18	114.04	0	0.00	0	0.00	0	0.00
Արարատ	2	0.19	1	0.06	0	0.00	1	0.13	16	14.42	9	13.68	0	0.00	4	0.51	3	0.23
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00
Գեղարքունիք	8	0.15	0	0.00	1	0.06	7	0.09	16	1.77	1	0.04	0	0.00	15	1.73	0	0.00
Լոռի	5	0.015	0	0.00	2	0.005	3	0.01	6	0.48	0	0.00	0	0.00	1	0.02	5	0.46
Կոտայք	12	0.53	1	0.50	11	0.03	0	0.00	28	15.99	7	15.23	0	0.00	14	0.58	7	0.18
Շիրակ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	5.54	2	4.89	0	0.00	4	0.65	0	0.00
Սյունիք	1	0.002	0	0.00	1	0.002	0	0.00	6	1.59	0	0.00	3	0.61	1	0.01	2	0.97
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	93.51	12	93.47	0	0.00	0	0.00	2	0.04
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	12	0.82	3	0.34	1	0.19	5	0.18	3	0.11
<b>Ընդամենը</b>	<b>46</b>	<b>1.01</b>	<b>2</b>	<b>0.56</b>	<b>23</b>	<b>0.17</b>	<b>21</b>	<b>0.28</b>	<b>137</b>	<b>248.93</b>	<b>52</b>	<b>241.69</b>	<b>4</b>	<b>0.80</b>	<b>47</b>	<b>3.93</b>	<b>34</b>	<b>2.51</b>

2017 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 2 գործարք (0.80 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի մայիսին, 2016 թվականի մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 8.7 %-ով: Ընդ որում, Երևանում աճել է 2.0 անգամ, իսկ մարզերում նվազել է 12.9 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 16.9 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ նվազել է 21.1 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 40.0 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 3.3 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին

գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Մասնավորագույն	Միջին			Նվազագույն	Մասնավորագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	8	16.59	72.5	746.5	468.5	30	51.05	365.0	12000.0	3365.4
Ապարան						3	0.70	86.5	2727.3	635.1
Թալին						26	19.76	93.6	5494.5	691.5
Ծաղկահովիտ								79.5	1000.0	440.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	7	3.02	77.8	3428.6	1330.2	81	22.96	335.1	10833.3	2674.2
Մասիս						13	4.79	200.0	11904.8	3438.0
Վեդի	4	8.52	61.3	1000.0	296.0	26	16.07	207.0	10795.1	1976.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	3	1.20	88.6	779.7	332.4	36	25.76	294.3	9090.0	1470.0
Բաղրամյան	1	0.72	2015.8	2015.8	2015.8	24	330.75	90.6	2561.1	827.4
Վաղարշապատ						20	12.68	444.4	11764.7	2029.5
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ								199.8	1875.0	531.5
Ճամբարակ						1	0.32	60.5	953.3	352.0
Մարտունի	1	0.32	127.6	127.6	127.6	3	0.58	51.1	2850.0	745.5
Սևան						1	0.03	52.2	2134.8	360.0
Վարդենիս						9	9.49	41.2	2575.1	354.3
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						11	8.35	170.4	6424.2	545.5
Գուգարք						1	0.13	234.6	6065.9	825.0
Սպիտակ	1	0.05	1050.0	1050.0	1050.0	5	2.92	250.0	5555.5	655.0
Ստեփանավան						24	19.67	90.6	1686.6	420.0
Տաշիր						51	22.82	45.3	1384.4	186.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	2	0.89	346.3	917.0	631.6	33	7.45	279.3	11942.7	3977.0
Եղվարդ	5	2.58	218.9	1188.1	831.9	50	37.47	174.4	11971.8	2573.3
Հրազդան						17	20.57	130.5	10256.4	1085.0
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						11	14.63	252.0	1693.1	712.5
Ամասիա						2	9.10	40.9	261.0	145.0
Անի						14	15.36	110.6	546.9	467.2
Աշոցք								58.5	215.8	142.0
Արթիկ						6	5.00	79.4	1428.6	555.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						1	3.00	92.6	1023.2	710.0
Կապան						1	0.53	120.0	841.6	462.5
Մեղրի						2	0.32	193.0	3000.0	845.0
Սիսիան	3	2.70	131.3	1127.5	463.7	16	11.79	46.3	1977.4	532.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	25	268.05	52.5	2607.2	365.8	17	131.86	125.0	10000.0	1820.0
Վայք								58.8	1430.7	640.0
<b>Տավուշի մարզ</b>										
Բերդ						7	1.90	213.3	3783.8	725.0
Իջևան	15	5.52	152.7	1994.5	363.5	1	0.36	267.5	9454.5	1680.0
Նոյեմբերյան	1	0.38	306.9	306.9	306.9			46.7	7368.4	1025.5



Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2017 թվականի մայիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	1	93.0	2301.0	2301.0	2301.0	11	11547.0	130.7	22200.0	2586.0
Ապարան						1	6290.0	124.1	609.6	389.5
Թալին						4	7815.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ						1	2790.0	60.0	214.3	95.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	2	4142.0	357.0	416.9	387.0	15	16704.5	173.9	7140.3	902.5
Մասիս						26	18683.0	187.5	25000.0	1203.0
Վեդի						9	11310.0	126.1	5000.0	663.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						16	17549.0	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						5	6000.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ						24	19321.0	197.4	26528.4	1530.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	2	2527.5	124.4	124.4	124.4	1	1200.0	186.6	1084.3	683.8
Ճամբարակ						1	1000.0	71.3	2286.2	147.0
Մարտունի						13	12944.2	119.3	5000.0	277.0
Սևան						2	1224.0	240.0	3110.4	350.0
Վարդենիս						2	2193.4	72.5	987.2	150.5
<b>Լոռու մարզ</b>										
Այվերդի						2	1930.0	114.3	1388.9	217.0
Գուգարք						2	41.0	77.9	14083.3	1259.0
Սպիտակ						1	1600.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						1	773.2	88.2	1666.7	176.0
Տաշիր								45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	11	325.1	1618.5	5697.4	4483.1	35	30606.3	264.5	35353.5	1955.0
Եղվարդ	4	724.2	255.3	1941.5	1519.8	29	21664.3	173.6	27000.0	2852.5
Հրազդան						3	1900.0	117.7	34848.5	1317.7
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	1	55.0	4400.0	4400.0	4400.0	2	830.0	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի						2	1615.3	67.9	180.6	218.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ						1	540.0	111.8	5000.0	217.5
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	1435.2	112.2	1700.0	369.0
Կապան								67.9	2638.9	375.0
Մեղրի						3	2100.0	68.5	632.9	271.5
Սիսիան	2	1500.0	367.2	580.8	478.5	4	3760.0	123.5	875.0	263.0
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	1	664.6	704.2	704.2	704.2	1	390.0	96.7	7659.6	505.7

Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ						1	871.8	75.8	810.0	131.0
Իջևան						4	3379.0	74.1	14423.1	483.5
Նոյեմբերյան	1	24.0	2200.0	2200.0	2200.0			125.0	1948.1	259.0

2017 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 737 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.7 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 90.6 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2017 թվականի մայիսին, 2017 թվականի ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 3.5 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 17.0 %-ով:

2017 թվականի մայիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 36 բնակարանի, 39 անհատական բնակելի տան, 300 հասարակական և 184 արտադրական նշանակության օբյեկտի, 171 հողի, 1 այգետնակ և 6 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի մայիսին հանրապետությունում վարձակալված 1512.26 հա հողից 0.33 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 1511.93 հա հողերից 1398.56 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 107.45 հա արդյունաբերական օբյեկտների, 3.16 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Վայոց ձորի մարզում՝ 481.65 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2376 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 15.1 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի ապրիլի համեմատ, աճել է 62.3 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 20.7 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (50.7 %), անհատական բնակելի տների (19.9 %), հասարակական նշանակության օբյեկտների (15.0 %) և հողերի (7.8%) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1428 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2017 թվականի ապրիլի համեմատ աճել է 55.9 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 36.8 %-ով:

2017 թվականի մայիսին հանրապետությունում գրավադրվել է 206.67 հա հող, որից 6.09 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 193.08 հա կամ 93.4 %-ը գյուղատնտեսական նշանակության, որից 0.50 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արմավիրի մարզում՝ 143.39 հա, որից 142.85 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի մայիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 206 գործարք: 2017 թվականի մայիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի ապրիլի համեմատ, աճել է 41.1 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 28.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 174 գործարք, որը 2017 թվականի ապրիլի համեմատ, աճել է 48.7 %-ով, իսկ 2016 թվականի նույն

ժամանակահատվածի համեմատ՝ 79.4 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2017 թվականի ապրիլի համեմատ, աճել է 10.3 %-ով, իսկ 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել 49.2 %-ով:

2017 թվականի մայիսին հանրապետությունում արձանագրվել է 1902 առաջնային գրանցում, որոնց քանակը, 2017 թվականի ապրիլի համեմատ, աճել է 35.2 %-ով, իսկ 2016 թվականի մայիսի համեմատ՝ 23.7 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 12.1 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (18.2%):

**« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**